Հավելված 7
«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4»

ք. Ծաղկաձոր «20» հուլիս 2023թ.

«Ծաղկաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ն.Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Մինասյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***«Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ»-ը*** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված N2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով **կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:**

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ***3 /երեք/ տարին*** : Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[1]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) **Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի** ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-

[1] *4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չի հանդիսանում շինարարական ծրագիրը:*

ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **78 000 000 (յոթանասունութ միլիոն)** ՀՀ դրամ, որից **13 000 000 (տասներեք միլիոն)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[2]

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

---

[2] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[4].

N	Խախտումը	Պատասխանատվությունը *
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7	Հասարակությանն իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[4] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են*

		տոկոսի չափով
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
14	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

* 2. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի.

1) տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից,

2) եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով կնքված այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակներում արձանագրվել է ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը,

3) եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ.

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[5]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան	«Մինասյաններ Շին» ՍՊԸ
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26
ՀՀ ՖՆ ԳՎ	<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 03027029	ՀՎՀՀ 08423306
ՀՀ 900122002258	ՀՀ 115001071808099
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան	Տնօրեն Գ.Մինասյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[5] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում*

Հավելված թիվ 1
« 20 » հուլիս 2023թ. կնքված
ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԿԱՏԱՐՄԱՆ

<<	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ) 5x6	Կշիռը
1	3	4	5	6	7	8
1	Նախահաշիվ N 1 **Ջրամատակարարման արտաքին ցանց**					
2	Պողպատյա խողովակը պոլիէթիլենայինի անցումային զույգ կցաշուրթի մանտաժ միացում Φ110մմ/ներառյալ միջադիրը և հեղյուսմանեկը/	հատ	2	5,000	10,000	
3	Պողպատյա խողովակը պոլիէթիլենայինի անցումային զույգ կցաշուրթի մանտաժ միացում Φ159մմ/ներառյալ միջադիրը և հեղյուսմանեկը/	հատ	2	7,000	14,000	
4	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով կողլիցքով	մ³	3402	1,000	3402,000	
5	VI կարգի գրունտի մշակում մեխանիզմով կողլիցքով	մ³	130	1,500	195,000	
6	Խրամուղու փորում 4-րդ կարգի գրունտում ձեռքով	մ³	680	2,000	1360,800	
7	Խողովակի բարձիկի իրականացում մանրահատիկ ավազից h=10սմ խողովակի հատակ և 25սմ խողովակի վրա	մ3	972	4,000	3888,000	74,11%
8	Ետլիցք ձեռքով տեղի փափուկ գրունտով	մ³	1008	2,000	2016,000	
9	**Գրունտի ետլիցք բուլդոզերով տեղի քնահողով ,տուփանումով**	**մ³**	**2186**	**2,500**	**5466,000**	
10	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	մ3	1018	1,000	1018,000	
11	Պողպատե խողովակ, Φ=425մմx6մմ	գմ	9	20,000	180,000	
12	Ձևավոր մասեր	հատ	4	5,000	20,000	

13	Պողպատե խողովակի նորմալ հակակոռոզիոն մեկուսացում	մ	2	3,000	6,000	
14	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժման աշխատանքներ / խողովակ, թիթեղ, շերտապողպատ/	տն	0,40	200,000	80,000	
15	Պողպատե թիթեղ 5,0մմ հաստ	մ2	2,0	3,000	6,000	
16	Պոլիէթիլենային խողովակի մենտաժ,խմելու ջրի համար, d=110x8,1մմ, 12,5 մթն.ճնշ.	գմ	110	3,000	330,000	
17	Պոլիէթիլենային խողովակի մենտաժ,խմելու ջրի համար, d=63x4,7մմ, 12,5 մթն.ճնշ.	գմ	110	2,500	275,000	
18	Պոլիէթիլենային խողովակի մոնտաժ,խմելու ջրի համար, d=125x9,2մմ, 12,5 մթն.ճնշ.	գմ	270	3,200	864,000	
19	Պոլիէթիլենային խողովակի մենտաժ,խմելու ջրի համար, d=160x14,6մմ, 16.0 մթն.ճնշ.	գմ	760	4,500	3420,000	
20	Պողպատե խողովակի մոնտաժ,խմելու ջրի համար, DH=159x4,5մմ	գմ	1900	12,600	23940,000	
21	Պոլիէթիլենային ձևավոր մասերի մոնտաժ	հատ	80,0	3,000	240,000	
22	DH=127x3,0մմ տրամագծով պողպատե խողովակի մոնտաժ	գմ	25	12,000	300,000	
23	DH=219x5,0մմ տրամագծով պողպատե խողովակի մոնտաժ	գմ	25	25,000	625,000	
24	պող.խող. նորմալ հակակոռոզիոն մեկուսացում	մ	100	2,000	200,000	
25	Համակարգի փորձարկում,ախտահանում	գմ	3150,0	0,100	315,000	
26	Ընդամենը՝				48170,800	
27	**Օդահան և թողարկիչներ**					
28	Ե/բ-ից կլոր դիտահորեր D=1000մմ,H=1500մմ	մ3	2,40	60,000	144,000	
29	**Երկաթբետոնե կլոր դիտահոր, 1000x1000մմ**	**հատ**	**3**	**100,000**	**300,000**	
30	Երկաթբետոնե կլոր դիտահոր, 1000x500մմ	հատ	3	100,000	300,000	
31	Դիտահորի հատակի սալ 1,5*1,5	հատ	3	100,000	300,000	19,24%
32	Դիտահորի ծածկի սալ 1,2*1,2	հատ	3	80,000	240,000	
33	Թուջե մտոցի տեղադրում	հատ	3	80,000	240,000	
34	Փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով	$մ^3$	11,8	2,000	23,520	

35	Գրունտի ետլիցք ձեռքով	մ³	7,9	2,000	15,868
36	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	մ3	3,8	3,000	11,478
37	Բնահողի տոփանում խճով h=10սմ	մ2	6,76	3,000	20,280
38	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքի տակ B12.5 դասի բետոնից	մ³	0,68	60,000	40,560
39	ե/բ միաձույլ հորի պատրաստում B20 դասի բետոնից . F-150, W-4, B-20	մ³	1,52	60,000	91,200
40	Ամրան Ի6AI	տ	0,038	600,000	22,800
41	Ամրան Ի8A500C	տ	0,0571	600,000	34,260
42	Ամրան Ի10A500C	տ	0,156	600,000	93,360
43	Հորի հատակ B20 դասի բետոնից F-150, W-4,	մ³	1,30	60,000	78,000
44	Ամրան Ի8A500C	տ	0,0261	600,000	15,660
45	Ամրան Ի10A500C	տ	0,163	600,000	97,920
46	Պէ ե ռ աբ աշ խի չ 125*40*125մ մ	հատ	1	3,000	3,000
47	Պէ պո ղ պատ կ ց աշ ո ւ ր թ 40մ մ	հատ	1	2,000	2,000
48	Պո ղ պատյ ա փակ ան 40մ մ	հատ	1	10,000	10,000
49	Dy=40x3,0մ մ տրամագծով պողպատե խողովակի մոնտաժ	գմ	8	5,000	40,000
50	Պո ղ պատյ ա ե ռ աբ աշ խի չ 159*50*159մ մ	հատ	2	10,000	20,000
51	Պէ պո ղ պատ կ ց աշ ո ւ ր թ 50մ մ	հատ	2	10,000	20,000
52	Պո ղ պատյ ա ս ո ղ ն ակ ավ ո ր փակ ան 50մ մ	հատ	2	15,000	30,000
53	Օդահեռացման փականներ/վանտուզ/ ВБ Ду 50 PN 20,կ ց ամ աս ե ր Պէ ան ց ո ւ մ ն ե ր /	հատ	2	3,000	6,000
54	Նախահաշիվ N2 Շինարարական աշխատանքներ				0,000
55	Հողային աշխատանքներ				0,000
56	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով ինքնաթափ մեքենաների վրա բարձելով	մ³	200	1,200	240,000

57	III կարգի գրունտի մշակում ձեռքով	մ^3	40	1,500	60,000
58	II կարգի գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ^3	100	2,000	200,000
59	Հողի հարթեցում տեղում	մ3	140	1,000	140,000
60	Ավելորդ գրունտի հավաքում և բարձում	մ3	19	2,000	38,000
61	Շին աղբի և ավելորդ գրունտի տեղափոխում 10կմ հեռավորության վրա	տ	10	3,000	30,000
62	<u>Հիմքեր</u>				0,000
63	Բնահողի տոփանում խճով խտացում պնևմախտացուցիչներով	մ2	6,4	2,000	12,800
64	Խճից հիմնատակի իրականացում h=10սմ	մ2	6,4	2,000	12,800
65	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքի տակ B12,5 դասի բետոնից h=30սմ	մ^3	5	50,000	250,000
66	<u>Հատակներ</u>				0,000
67	ե/բ միաձույլ հատակների պատրաստում B22.5դասի բետոնից	մ^3	20	75,000	1500,000
68	Ամրան Ի6АС-1	տ	0,024	500,000	12,000
69	Ամրան Ի12А500С	տ	1,400	500,000	700,000
70	Հատակի և պատերի սվաղում ցեմենտային շաղախով ներառյալ ցանցը	մ^2	154	3,500	539,000
71	<u>Պատեր</u>				0,000
72	ե/բ միաձույլ պատերի պատրաստում B22.5 դասի բետոնից	մ^3	29,4	80,000	2352,000
73	**Ամրան Ի6АІ**	**տ**	**0,1**	**500,000**	**50,000**
74	Ամրան Ի12А500С	տ	0,900	500,000	450,000
75	Ամրան Ի16А500С	տ	1,200	500,000	600,000
76	<u>Ծածկ</u>				0,000
77	Հորի էլեմենտ ՕՀ-1	հատ	1	30,000	30,000
78	Թուջե մտոցի տեղադրում Φ700մմ	հատ	1	80,000	80,000

79	Ծածկի սալ ՊԿԺ 6.0-1.5	հատ	4	50,000	200,000
80	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0,44	500,000	220,000
81	Անկյունակ L100x10մմ	կգ	4	1,000	4,000
82	Ամրան Ի6AI	տ	0,15	500,000	75,000
83	Ե/բ միաձույլ ծածկի սալի պատրաստում B22.5 դասի բետոնից	մ^3	3	80,000	240,000
84	Ամրան Ի8AI	տ	0,166	500,000	83,000
85	Լցվածության խողովակի իրականացում և մոնտաժ DH=76x4մմ	մ	7	5,000	35,000
86	Լցվածության խողովակի ձևավոր մասերի մոնտաժ DH=76x4մմ	հատ	9	6,000	54,000
87	Պողպատե խողովակի մոնտաժ,խմելու ջրի համար, DH=159x4.5մմ	գմ	10	3,000	30,000
88	Պատերի և ծածկի հիդրոմեկուսացում իզոգամից 2 շերտ	մ2	154	7,500	1155,000
89	Խարամի շերտ 350մմ	մ3	20	5,000	100,000
90	DH=108x4մմ տրամագծով պողպատե դատարկման խողովակի մոնտաժ	գմ	30	3,000	90,000
91	Պոլիէթիլենային խողովակի մոնտաժ, օդափոխության համար 150մմ	գմ	8	2,000	16,000
92	**Φ76մմ լողանավոր փականի մոնտաժում**	**հատ**	**1.0**	**10,000**	**10,000**
93	Խողովակի ձևավոր մասերի մոնտաժում	հատ	5.0	3,000	15,000
94	Խողովակ DH=108x2.5մմ	մ	36	5,000	180,000
95	DH=76x4մմ տրամագծով պողպատե խողովակի մոնտաժ	գմ	18	5,500	99,000
96	Խողովակի պողպատյա ձևավոր մասերի մոնտաժում	հատ	10.0	3,000	30,000
97	Φ159մմ պողպատյա փականի մոնտաժում ներառյալ զուլյգ կցաշուրթերը	հատ	2.0	15,000	30,000
98	Φ100մմ պողպատյա փականի մոնտաժում ներառյալ զուլյգ կցաշուրթերը	հատ	2.0	10,000	20,000
99	Φ70մմ պողպատյա փականի մոնտաժում ներառյալ զուլյգ կցաշուրթերը	հատ	2.0	8,000	16,000
100	**Փականայինհոր**				

101	Փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով	մ³	14,1	2,000	28,224	
102	Գրունտի ետլիցք ձեռքով	մ³	10,3	1,000	10,286	
103	Ավելորդ գրունտի հարթեցում տեղում	մ3	3,8	2,000	7,652	
104	Բնահողի տոփանում խճով h=10սմ	մ2	1,00	1,000	1,000	
105	Նախապատրաստական շերտի իրականացում հիմքի տակ B12.5 դասի բետոնից	մ³	1,00	60,000	60,000	
106	ե/բ միաձույլ հորի պատրաստում B20 դասի բետոնից , F-150, W-4,	մ³	1	83,000	83,000	
107	Ամրան Ի6AI	տ	0,05	500,000	25,000	
108	Ամրան Ի12A500C	տ	0,186	500,000	92,800	
109	Ընդամենը՝				12506,468	
110	Նախահաշիվ N3 Ցանկապատ					
111	Աճած ծառարմատների և թփերի հանում ձեռքով	հատ	20	1,000	20,000	
112	Հողակույտի հարթեցում ձեռքով	մ3	30	2,000	60,000	
113	Ցանկապատի հիմքերի փորում 4-րդ կարգի գրունտում ձեռքով	մ³	11,3	2,000	22,500	
114	2-րդ կարգի բնահողի փորում ձեռքով	մ3	6	1,000	6,000	
115	Քանդաց բուսական հողի շերտի փոում դաշտում	մ3	15	2,000	30,000	
116	ՑԱՆԿԱՊԱՏԻ ԴՐՎԱԳ 1					
117	Խճի շերտի փռում տոփանումով h=5սմ հիմքերի տակ	մ3	1,00	10,000	10,000	6,66%
118	Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B 15 դասի բետոնով	մ3	9	75,000	675,000	
119	Պողպատե խողովակների տեղադրում 60x60x4մմ	մ	135	4,500	607,500	
120	Պողպատե անկյունակ 45*45*3մմ	մ	360	3,500	1260,000	
121	Ամրան Ի10A500C	տ	0,300	500,000	150,000	
122	"Դաբիցա" ցանց , d=2,5մմ , բջիջը 50x50մմ /ցինկապատ/	մ2	153	2,000	306,000	
123	Շերտապողպատ 4x40	կգ	80,0	1,000	80,000	
124	Շերտապողպատ 6x40	կգ	60,0	1,000	60,000	
125	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում / խողովակ, ցանց,	տն	3,02	200,000	604,000	

126	Մետաղե էլեմենտների ներկում 2 շերտ	մ2	160	1,600	256,000	
127	<u>Մետաղական դարպաս 1 հատ</u>				0,000	
128	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում / խողովակ, թիթեղ, շերտապողպատ/	տն	0,15	200,000	29,920	
129	Պողպատե խողովակների տեղադրում 60x60x4մ մ	մ	6	3,000	18,000	
130	Պողպատե անկյունակ 45*45*3մմ	մ	20	2,000	40,000	
131	"Դաբ ի ց ա" ց ան ց , d=2,5մ մ , բ ջ ի ջ ը 50x50մ մ /ց ի ն կ ապատ/	մ2	14	1,500	21,000	
132	Պողպատե թիթեղ 3մմ հաստ	մ2	2,0	2,000	4,000	
133	Շերտապողպատ 40x6	կգ	1,0	1,000	1,000	
134	Շերտապողպատ 6x30	կգ	1,0	1,000	1,000	
135	Ծխնի	հատ	4,0	8,403	33,612	
136	Բռնակ	հատ	1,0	5,000	5,000	
137	Փական,կողպեք	հատ	1,0	6,000	6,000	
138	Խամքարաբետոնե շերտի իրականացում B 15 դասի բետոնով	մ3	0,27	60,000	16,200	
139	Ընդամենը՝				4322,732	
	Ընդամենը՝				65000,000	
	ԱԱՀ	20,0%			13000,000	
	ԸՆԴԱՄԵՆԸ				78000,000	

Կապալառուն աշխատանքները կատարում է Ծաղկաձոր համայնք Փյունիկ բնակավայր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002258
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան
/ստորագրություն/
Մ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մինասյաններ Ծին» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08423306
ՀՀ 115001071808809
Տնօրեն Գ.Մինասյան
/ստորագրություն/
Մ.Տ

Հավելված թիվ 1.1
« 20 » հուլիս 2023թ. կնքված
ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4 ծածկագրով պայմանագրի

«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

Շինարարական նյութերի և սարքավորումների տեխնիկական բնութագիր

	Նյութերի անվանումը	Բնութագիր	Երաշխիքային ժամկետների նվազագույն պահանջները /տարի/
1	Պոլիէթիլենային խողովակի մոնտաժ.խմելու ջրի համար	ГОСТ 18599-2001	3
2	փականներ.ձևավոր մասեր	ГОСТ 5761-2005	3
3	Ե/բետոնե դիտահոր	ГОСТ 8020-2016	3
4	Թուջե մտոց	ГОСТ 3634-89	3
5	Բետոն B20,B25	ГОСТ 26633-2015	3
6	Պողպատե խողովակ	ГОСТ 3262-75	3
7	Ռաբիցա ցանց	ГОСТ 5336-80	3

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002258
Համայնքի ղեկավար Լ.Հարությունյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մինասյաններ Շին» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08423306
ՀՀ 11500107180088099
Տնօրեն Գ.Մինասյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« 20 » հուլիս 2023թ. կնքված
ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	«ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 176 օրացուցային օր:**
ԸՆԴԱՄԵՆԸ			

Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների օրացուցային գրաֆիկը ներկայացված է կից ֆայլով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002258
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մինասյաններ Շին» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08423306
ՀՀ 11500107180880 99
Տնօրեն Գ.Մինասյան

/ստորագրություն/

Աշխատանքների ժամանակացույց

N/N	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Օրեր ընդամենը 178 օր							
		22	22	22	22	22	22	22	22
1	Խրամուղղու քանդում								
2	Խողովակների մոնտաժում								
3	Խրամուղղու փորձարկում և ետլցք								
4	Տարածքի մաքրում								

Հասցե (адрес address)
Ծեղկաձոր համայնք

Անվանումը
(наименование-name)
Ծեղկաձոր համայնքի Գրանցիկ գետակալքի խոնավ ջրատարի կառուցման աշխատանքների նախագծահետ և փորձ. գնահ. այսն անցկացման աշխատանքներ

Թերթ (лист-sheet)	Թերթեր (листы-sheets)	Մասշտաբ (масштаб-scale)
18	19	U:1:1 M:1:1 M:1:1

Ստուգեց (дирек.-director) Ա.Գևորգյան
Գլխ. մասն. (гл. спец.-S.and.gr.) Ա. Գևորգյան
Գլխ. մասն. (гл. спец.-S.eng.gr) Ս. Գևորգյան
Նախագծող (разр.-developer) Ս. Գևորգյան
Ստուգող (норм.-checker) Ս. Խաչատրյան
Համաձայնեցնող (согласов.-agreed) Ի. Խաչատրյան

Աշխատանքների ժամանակացույց
График работы
Work schedule

Հավելված N 3
« 20 » հուլիս 2023թ. կնքված
ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241170	«ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03027029
ՀՀ 900122002258
Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մինասյաններ Շին» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08423306
ՀՀ 1150010718088099
Տնօրեն Գ.Մինասյան
/ստորագրություն/
Կ.Տ